Հաստատում եմ՝
Ավանդական բժշկության
համալսարանի
ռեկտոր, ԳԽ Նախագահ
_____ Ն. Խ. Սարիբեկյան
«02» _____09_____ 2013թ.

ԿԱՐԳ
ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ԵՎ ԶԵՂՉԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

I. Ընդհանուր դրույթներ

1.1 Սույն փաստաթուղթը սահմանում է ԱԲՀ-ում ուսանողներին նպաստների և զեղչերի տրամադրման կարգը:

1.2 Կարգն ընդունվում և փոփոխվում է ԱԲՀ-ի գիտական խորհրդի կողմից:

1.3 ԱԲՀ-ում ուսանողների նպաստների և զեղչերի տրամադրման հիմքում ընկած է ՀՀ օրենսդրությունը, սույն կարգը և կանոնակարգող ներքին այլ փաստաթղթեր:

II. Ուսանողական նպաստների հատկացման կարգն ու պայմանները

2.1 Ուսանողական նպաստը մասնակի փոխհատուցում է ուսանողի ուսման վարձավճարը ԱԲՀ ֆինանսական միջոցների հաշվին:

2.2 Ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցում տրամադրվում է՝

2.2.1 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամներին և հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող անձանց,

2.2.2 զոհված զինծառայողի երեխա-ուսանողներին,

2.2.3 պարտադիր ժամկետային զինվորական ծառայության ընթացքում հաշմանդամ դարձած ուսանողներին:

2.3 Ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարի փոխհատուցման իրավունքից օգտվող ուսանողի կողմից հարգելի պատճառով ուսումնառությունն ընդհատելու դեպքում ուսանողական նպաստը տվյալ ուսումնական տարում չի օգտագործվում և հետագայում ավելացվում է այն կուրսի տվյալ ուսումնական տարվա ուսանողական նպաստին, որտեղ ուսանողը վերականգնում է իր ուսանողական իրավունքները:

2.4 Համալսարանը ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցում տրամադրում է /մասնակի զեղչերի կիրառմամբ/ նաև հետևյալ կարգավիճակ ունեցող անձանց.

2.4.1 միակողմանի ծնողազուրկ /միածնող/ ուսանողներին,

2.4.2 համալսարանում երկու և ավելի ուսանող երեխա ունեցող ընտանիքների ուսանողներին,

2.4.3 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամ ծնողներ ունեցող ուսանողներին,

2.4.4 1-ին կամ 2-րդ խմբերի հաշմանդամ ազատամարտիկի երեխա կամ ընտանիքի անդամ ուսանողներին,

2.4.5 համալսարանում 7 և ավելի տարի աշխատանքային պայմանագրով անընդմեջ աշխատող աշխատակիցների երեխաներին,

2.4.6 առանձնահատուկ դեպքերում, ռեկտորի որոշմամբ այլ կարգավիճակ ունեցող ուսանողներին:

2.5 Հարգելի պատճառով /ակադեմիական արձակուրդ՝ առողջական վիճակի, զինծառայության մեկնելու կամ ուսանողական փոխանակման ծրագրերով արտասահման ուսումնառության գործուղվելու դեպքում /ուսումնառությունն ընդհատած ուսանողը ուսանողական իրավունքները վերականգնելիս պահպանում է նախկինում ունեցած ուսանողական նպաստ ստանալու իրավունքը:

III. Անվանական կրթաթոշակների հատկացման կարգն ու պայմանները

3.1 Համալսարանը ֆինանսական օժանդակություն է ցուցաբերում գերազանց առաջադիմություն ցուցաբերած, հասարակական ակտիվ դիրքորոշում ու պատշաճ վարքագիծ դրսևորած ուսանողներին՝ ֆինանսական խրախուսանքի ձևով:

3.2 Ուսանողների հասարակական ակտիվ դիրքորոշումը բնութագրվում է ստորև նշվող ցուցանիշներով՝

3.2.1 մասնակցությունը համալսարանի ուսանողական հասարակական աշխատանքներին,

3.2.2 զեկուցումներ, ռեֆերատներ, հրատարակված աշխատանքներ /գիտական ամսագրերում և զանգվածային լրատվության միջոցներում/,

3.2.3 մասնակցությունը միջբուհական, քաղաքային, հանրապետական և միջազգային մրցույթներին, օլիմպիադաներին, ուսանողական գիտական նստաշրջաններին,

3.2.4 ֆակուլտետի կամ համալսարանի ղեկավարության մեկանգամյա կամ բազմակի հանձնարարականների բարեխղճորեն և ժամանակին կատարում:

3.3 Ուսանողների պատշաճ վարքագիծը դրսևորվում է նրանց կողմից համալսարանի ներքին կարգապահության կանոնների խստիվ պահպանմամբ: